ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«31» օգոստոսի 2022 թ. № 904-Լ

ՀՐԱՄԱՆ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 1-ին, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3.1-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վարչական ակտ ընդունելու իրավասությունը վերապահել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետին:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8/31/2022

X

ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416 **ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ**

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ